ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար հսկողական համակարգերի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-02/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«31» մարտի 2017թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արմեն Ալանյան՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար, (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ)

հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Համբարձումյան՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),

Սարգիս Արմենակյան՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),

Արման Ղուկասյան՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ),

Ավետիք Ավագյան՝ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ):

հանձնաժողովի քարտուղար՝

Դավիթ Թովմասյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԿ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

1. **Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-02/17» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին.**

Քանի որ Գնահատող հանձնաժողովի նիստին ներկա էր գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցություններին հրավիրված մասնակիցներից միայն <<ՍԵԳ>> ՍՊԸ-ի տնօրենը հանձնաժողովն որոշեց գների նվազեցման շուրջ կազմակերպել բանակցություններ՝ բանակցությունների համար սահմանելով 15/տասնհինգ/ րոպե ժամանակ.

1.1 Կազմակերպված բանակցությունների արդյունքում՝ մինչև բանակցությունների համար սահմանված ժամկետի ավարտը՝ Մասնակիցը որոշեց նվազեցնել 1-ին չափաբաժնով ներկայացված գնային առաջարկը:

Մասնակցի՝ գնային առաջարկն է.

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	<<ՍԵԳ>> ՍՊԸ		
		Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած ընդհանուր գինը /ներառյալ ԱԱՀ/
1	2	3	4	5
1	Անվտանգության տեսախցիկների վերանորոգման ծառայություններ	997500	-	997500

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍԵԳ» ՍՊԸ-ին.

1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Այ Սերվիս» ՍՊԸ-ին

2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍԵԳ» ՍՊԸ-ին.

2-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին.

3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ին.

3-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍԵԳ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017թ. ապրիլի 06-ը ներառյալ ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2017թ. ապրիլի 07-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ասլանյան

(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Կ. Համբարձումյան

(ստորագրություն)

Ս. Արմենակյան

(ստորագրություն)

Ա. Ղուկասյան

(ստորագրություն)

Ա. Ավագյան

(ստորագրություն)

Գնումները համակարգող՝
Դ. Թովմասյան

(ստորագրություն)